հողերը խլում-յափշտակում են մի քանի զօրաւոր ու ագահ բէկերը. իսկ ես՝ այդ դժբաղդ ժողովրդի որպէս հարազատ որդի, իմ սրբազան պարտքս եմ համարում բողոքել այդ անիրաւութիւնների դէմ և իշխանութեան խորին ուշադրութիւնը հրաւիրել կատարուած յանդուգն գեղծումների մասին։ Վասն զի դժբաղդ Հայ ժողովուրդը այլևս ապրելու հնար և միջոց չունի, ուրիշ մօտակայ գաւառներում էլ ազատ հող չկայ, ուր նա կարողանար գաղթել և նոր բնակութիւն հաստատել *)։ Ընդհանրապէս Ուտիացոց աշխարհի բոլոր երկրագործ գիւղացիք թաղուած են ծանր պարտքերի տակ, մինչև իրենց կոկորդը, որոնցից ազատուելու ոչ մի հնար չունին։ Որովհետև, ինչպէս ասացի, նրանց դառն աշխատանքների արդիւնքները բէկերն են յափշտակում, նրանց ուղն ու ծուծը անխիղճ վաշխառուներն են ծծում անյագ տզրուկի պէս։ Ընտիր յատկութիւններով օժտուած մի բուռն ընտիր երկրագործ Հայ ժողովրդին թողնել իրենց անողոք ճակատագրին, բոլորովին անխոհեմութիւն ու անխղճութիւն է ամեն մի բանիմաց և զգայուն Հայի կողմից։ Այդ դժբաղդ

---

*) Բագուաբնակ Հայ կալուածատէր Առաքել-ապէր Ծատուրեանի և Գրիգոր-ապէր Դիլդարեանի հետ մի քանի տարի առաջ երկար ու բարակ գրաւոր բանակցութիւն սկսեցի, որպէսզի հողից զրկուած 45—50 տուն Հայ գիւղացիների բնակութեան համար հողաբաժիններ տան իրենց ընդարձակ ագարակներում որոշ պայմաններով։ Բայց բարեսիրտ երկու Հայերը ևս՝ իրենցից անկախ արգելքների պատճառներով իմ յոյսերս ի դերև հանեցին...